ԶԵԿՈՒՅԱԳԻՐ

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԱՐՄԱՎԻՐԻ
ՄԱՐԶԻ ՄՈՒՍԱԼԵՌԻ ԳՅՈՒՂԱԿԱՆ ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐԻ
2011Թ.ԿԻՍԱՄՅԱԿԻ
ԳՈՐԾՈՒՆԵՈՒԹՅԱՆ ՎԵՐԱԲԵՐՅԱԼ

Մուսալեռի գյուղապետարանը իր աշխատանքային գործունեությունը կազմակերպել է ղեկավարվելով «Տեղական ինքնակառավարման մասին» ՀՀ օրենքի պահանջներով: Ըստ բնագավառների իրականացվել են հետևյալ աշխատանքները

Քաղաքացիների իրավունքների պաշտպանության բնագավառում

Կատարել է քաղաքացիների ընդունելություն, օրենքով սահմանված կարգով քննության է առել քաղաքացիների առաջարկությունները, դիմումները և բողոքները և ձեռնարկել է համապատասխան միջոցներ:

Միջոցներ է ձեռնարկել պաշտպանելու համայնքի բնակիչների ու տնտեսվարող սուբյեկտների իրավունքները և օրինական շահերը:

Նոտարական գրասենյակում, անձնագրային բաժնում, կադաստրի Վաղարշապատի տարածքային ստորաբաժանումում բազմիցս հանդես է եկել համայնքի բնակիչների օրինական շահերը պաշտպանելու նպատակով:

Հրավիրել և վարել է Մուսալեռի գյուղական համայնքի ավագանու թվով 8 նիստ:

Արձակել է 32 կարգադրություն, ընդունել է 25 որոշում: Տրվել է 454 տեղեկանք: Ելից գրությունների թիվը կազմում է 114, մտից գրությունների թիվը՝ 90:

Ֆինանսների բնագավառում

Օրենքով սահմանված կարգով կազմակերպել է գույքահարկի՝ շինություններ 539 200դրամ /1-ին կիսամյակի պլանային ցուցանիշը 1 250 000դրամ/, փոխադրամիջոցներ 1 245 000 դրամ /1-ին կիսամյակի պլանային ցուցանիշը 3 000 000դրամ/, հողի հարկի՝ 2 091 800 դրամ /1-ին կիսամյակի պլանային ցուցանիշը 3 250 000դրամ/, տեղական տուրքերի՝ 99 800 դրամ /1-ին կիսամյակի 311 000 դրամ/

Կոմունալ տնտեսության
և բարեկարգման բնագավառում

Վերահսկողություն է իրականացվել համայնքի տարածքում աղբահանության աշխատանքները պատշաճ մակարդակով կատարելու համար: Աղբահանությունը կատարվում է համայնքի թվով 15 փողոցներում, յուրաքանչյուր փողոցում 4 կանգառ, շաբաթական 2 անգամ: Պարբերաբար կատարվում է գյուղապետարանի, մանկապարտեզի, դպրոցի տարածքների Նաիրի փողոցի մաքրման և բարեկարգման աշխատանքներ: Կատարվել է Անի թաղամասի կոյուղագծի մաքրում

Համայնքի ղեկավարի գործունեությունը առևտրի և սպասարկման
բնագավառում

Համայնքի ղեկավարի կողմից տրվել է ոգելից խմիչքների, ծխախոտի, վառելիքաքսայուղային նյութերի վաճառքի թույլտվություն:

Հանրային, կենցաղային ծառայությունների ոլորտում հսկողություն է իրականացվել:

Առողջապահության,
ֆիզիկական կուլտուրայի և սպորտի բնագավառում

Նպաստում է համայնքում ֆիզիկական կուլտուրայի և սպորտի զարգացմանը: Կազմակերպվել է միջհամայնքային ֆուտբոլի խաղային մրցույթներ: Պարբերաբար տարվում են Ֆուտբոլի խաղահրապարակի մաքրման և պահպանման աշխատանքներ:

Կրթության, մշակույթի և
երիտասարդության հետ տարվող աշխատանքների բնագավառում

Համայնքի ուսանողների համար ձեռք է բերվել Երևանի քաղաքապետարանի պատանի հանդիսատեսի թատրոնի <Էլիզա> ներկայացման տոմսեր /30 հատ/:

ԱՐՁԱՆԱԳՐՈՒԹՅՈՒՆ N 1

Հայաստանի Հանրապետության Արմավիրի մարզի Մուսալեռի գյուղական համայնքի ղեկավարի հաշվետու ժողովի

2011 թվականի հուլիսի 13-ին ժամը 14-ին Հայաստանի Հանրապետության Արմավիրի մարզի Մուսալեռի գյուղապետարանում տեղի ունեցավ համայնքի ղեկավարի հաշվետու ժողով:

Ժողովին ներկա էին Հայաստանի Հանրապետության Արմավիրի մարզպետարանի աշխատակազմի գյուղատնտեսության և բնապահպանության վարչության բնապահպանության բաժնի աշխատակիցներ Սանասար Բաղդասարյանը և Վարդան Միրզախանյանը, Մուսալեռի գյուղապետարանի աշխատակիցները, համայնքի ավագանու անդամները և համայնքի թվով 10 բնակիչներ:

Համայնքի բնակիչները համայնքի ղեկավարին հղեցին իրենց հուզող հարցերը:

Առավել մեծ են բողոքները կապված ոռոգման ջրի խնդրի հետ, ինչի հետևանքով գյուղատնտեսությամբ զբաղվելը գյուղացու համար դարձել է անեկամտաբեր և նույնիսկ հարկ վճարելու հնարավորություն չի լինում:

Բնակիչները ցանկանում են, որպեսզի համայնքի բոլոր փողոցները ու ճանապարհները լինեն բարեկարգ, ասֆալտապատված լինեն գիշերային լուսավորությամբ, բոլոր բնակարանները լինեն գազաֆիկացված:

Համայնքի ղեկավարը ներկայացրեց 2011 թվականի 1-ին կիսամյակի ընթացքում կատարված աշխատանքները, խոսեց հետագա ծրագրերի մասին, պատասխանեց համայնքի բնակիչների հուզող հարցերին.

Նա հայտնեց, որ գյուղապետարանի համար նույնպես առաջնահերթ են համարվում այն աշխատանքների իրագործումը, ինչպիսիք են խմելու ջրագծերի անցկացումը, փողոցների և ճանապարհների բարեկարգումը:

Կբարելավվի համայնքի ֆինանսական վիճակը՝ եկամուտների հավաքագրման մակարդակը բարձրացնելով: Կապահովվի համայնքի բնակիչների սոցիալական պաշտպանվածությունը:

Հնարավորինս կնպաստի գյուղատնտեսության և անասնապահության զարգացմանը: Ֆիզիկական կուլտուրայի և սպորտի զարգացմանն ուղղված միջոցառումներ կկիրառվեն:

Աշխատակազմի քարտուղար Գ. Մարտիրոսյան
Գ. Մուսալեռ
13.07.2011թ.